ԱՐԱՅՐ ԱԹՈՌՈՒՈՐԻՍ
ԵՎ ԹԵՐԵՐՈՒԹԻՍ

ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԹԵՄԵՐ

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մեծի Պահոց շրջանում այցելեց Հայաստանյայց թեմերը և իր հայրական պատգամը հղեց հավատացյալ ժողովրդին:

Ուրբաթ օրը, մարտի 6-ին, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետն այցելեց Արագածոտնի թեմ՝ Ապարան: Ճանապարհին Նորին Սրբությունը կանգ առավ Օշականում, որտեղ աշխատանքային հանդիպում ունեցավ թեմական առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի և Սբ. Մաշտոցի անվան դպրատան վարիչ-տնօրեն Ալֆրեդ Ծահնազարյանի հետ: Վեհափառ Հայրապետը հաստատեց դպրատան 1998-1999 թթ. միջոցառումների /գիտաժողովներ, ցուցահանդեսներ/ մի քանի ծրագրեր: Վեհափառ Հայրապետն այցելեց նաև դպրատան գրադարան ու թանգարան, գոհունակությամբ նկատեց մի շարք մտավորականների, արվեստագետների նվիրատվություններով հարստացած դպրատան հավաքածուները:

Օշականից Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Ապարան: Քաղաքի կենտրոնից Վեհափառ Հայրապետը Արագածոտնի մարզպետի պաշտոնակատար Ռաֆիկ Մկրտչյանի, Ապարանի քաղաքապետի և ժողովրդի հոծ բազմության հետ միասին շարժվեց դեպի Ս. Խաչ պատմական եկեղեցի, որտեղ հոգևորականները և դպրաց խմբի անդամները կատարեցին խաղաղական ժամերգություն:

Վեհափառ Հայրապետը իր պատգամը տվեց ժողովրդին՝ Մեծ Պահքի շրջանում նրանց հրավիրելով հոգևոր և բարոյական ինքնաքննարկման և ինքնասրբագրման, «որպեսզի քրիստոնեական հավատքից և սուրբ հայրերի քրիստոնեական ավանդույթներից ժառանգված հոգևոր և բարոյական արժեքները վերակենդանանան և վերապտղավորվեն արդի կյանքում, ազատ ու անկախ Հայաստանում»:

Վերջում ներկաներին բաժանվեց Վահափառ Հայրապետի խոհերն ու մտքերն ամփոփող Մեծի Պահոց շրջանին նվիրված «Հայրենաշունչ խոսքեր՝ մեր սիրեցյալ ժողովրդին» գրքույկից:

***

Կիրակի օրը, մարտի 8-ի առավոտյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Գեղարքունյաց թեմ՝ Գավառ: Քաղաքի մուտքին Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին թեմական առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը, Գեղարքունիքի մարզպետ Պավել Ասատրյանն ու Գավառի քաղաքապետը: Օքսիմբի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Գավառի Ս. Աստվածածին եկեղեցի: Հընթացս կիրակնօրյա Ս. Պատարագի քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ Մեծ Պահքի առիթով իր պատգամը հաղորդելով ժողովրդին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց Գավառի մանկատուն, որին

աջակցում է նաև Հայ Առաքելական Եկեղեցին: Մանկատանը բնակվող ավելի քան 100 երեխաները Վեհափառ Հայրապետին դիմավորեցին շարականների երգեցողությամբ, ապա Նորին Սրբությանը նվիրեցին իրենց ձեռքերով գործված փոքրիկ գորգ:

Հրաժեշտ տալով Գավառին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ջորագյուղ՝ Մսրոց անապատ եկեղեցի: Գյուղի բնակչությունը մեծ խանդավառությամբ դիմավորեց Վեհափառ Հայրապետին, ապա և ուղեկցեցին Հայոց Կաթողիկոսի քարոզը:

Վեհափառ Հայրապետը, Մեծ Պահքի օրերին շարունակելով այցելությունը Հայաստանյան թեմեր, մարտի 13-ին մեկնեց Կոտայքի թեմ /Աբովյան/, մարտի 18-ին՝ Արարատյան Հայրապետական թեմ /Երևան/, և մարտի 20-ին՝ Արմավիրի թեմ /Բամբակաշատի եկեղեցի/:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ